ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ. Պոլիս և իր դերը. հատոր երրորդ, Անթիլիաս, 1987, 687 էջ. հատոր չորրորդ, Անթիլիաս, 1988, 478 էջ։

Ականավոր հայագետի այս հատորները կազմում են մասն այն հինգհատորյակի, որը վերարտադրում է Կ. Պոլսի հայ համայնքի բազմադարյա պատմությունը։ Աշխատության առաջին հատորը լույս է տեսել 1965 թ., երկրորդը՝ 1970 թ. (երկուսն էլ Բեյրութում)։ Ամբողջ աշխատությունը (դեռևս չհրատարակված վերջին՝ հինգերորդ հատորի հետ միասին) ընդգրկում է այդ պատմության բազմաշերտ տարեգրությունը (1453—1922) և ակնառու ներդրում է հայագիտության բնագավառում[1]։

Գրախոսվող հատորները ներկայացնում են 1850-ական թթ. երկրորդ կեսից մինչև 1880-ական թթ. կեսն ընկած ժամանակաշրջանի արևմտահայ առաջատար գաղթօջախի ազգային, հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքը։ Հեղինակը առանձին մասերով դատել-առանձնացրել է պոլսահայ իրականության այնպիսի բնագավառներ, որոնք կապվելով ներքին տրամաբանությամբ, էականորեն արտացոլում են այդ տասնամյակների տեղաշարժերը։ Երբեմն թեման և նյութը նրան թելադրում են հետաքրքիր հայացք նետել տվյալ պրոբլեմի պատմությանը, որը և կարծեք ինչ-որ տեղ դայմանական է դարձնում ուսումնասիրվող ժամանակաշրջանի սահմանները։ Այս հանգամանքը, սակայն, նպաստում է առավել խորն ընկալելու համայնքի ապրած ժամանակաշրջանի և իրականության այն հատվածը, որի սահմանները հետևել ուրվագծվում են խնդրո առարկա հատորներում։

Աշխատության երրորդ հատորում շոշափվում են արևմտահայերի ազգային սահմանադրության, հայ հարանվանություններին, հասարակական գործիչներին, մամուլին, բարեգործական ընկերություններին, արևմտահայերի մշակութային կյանքի զարգացմանը, ազգային ինքնորոշմանը և այլնին վերաբերող խնդիրներ։ Նշված հարցերը, գրեթե նույն հետևողականությամբ, հետազոտվում են նաև չորրորդ հատորում։

Ազգային սահմանադրության և առհասարակ արևմտահայերի հասարակական խնդիրները հեղինակը քննարկում է Օսմանյան Թուրքիայի քաղաքական պատմության հենքի վրա։ Սիրունին ցույց է տալիս, որ դեռևս 1857 թ. Բ. դուռը մերժել է այդ կանոնագրությունը այն առարկությամբ, որ «պետության մեջ պետություն կստեղծեր ան»։ Օսմանյան բռնակալության անհանդուրժողականությամբ էլ հեղինակը պայմանավորում է արևմտահայերի սահմանադրության քաղաքական բովանդակագրկությունը։ Սրանով հանդերձ, Սիրունին ընդունում է սահմանադրության առաջադիմական նշանակությունը ազգային ինքնագիտակցության զարգացման, հոգևոր ու մշակութային վերելքը խթանելու գործում։

Օսմանյան բռնապետության և սահմանադրական սկզբունքի անհամատեղելիությունը կամ օսմանիզմի դոկտրինների համակարգում սահմանադրական սկզբունքի էական ձևախեղումները Սիրունին ցուցադրում է նաև օսմանյան սահմանադրականների գործունեության և սահմանադրության անփառունակ վախճանով։ Առհասարակ թանզիմաթի շրջանին հատկացված ընդարձակ հատվածում հեղինակը համոզիչ փաստերով ապացուցում է, որ օսմանիզմի և պանօսմանիզմի գաղափարները չլատում էին «նոր օսմաններին» քաղաքական պրոպագանդը, մեկուսացնում նրանց կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներից և պայմանավորում նրանց քաղաքական ծրագրերի չափավորությունը։ Թուրքական սահմանադրականների գործունեության բնութագիրը հայ պատմագրության մեջ սպասում է առանձին հետազոտության, ուստի Սիրունու աշխատության այս հատվածը իր լուրջ հարցադրումներով ըստ ամենայնի կնպաստի դրան։

Ազգային մշակույթի զարգացման գործում հեղինակը որոշակի տեղ է հատկացնում ամիրաների գործունեությանը։ Մեջանում գրեթե աննշմար է մնացել ամիրաների հասարակական նկարագրի այս կողմը և անբաժան տիրապետել է ծայրահեղորեն գասակարգայնացված այն տեսակետը, թե ամիրաները միայն կողոպտել են ժողովրդին և մանրադրամ շպրտել նրան՝ բարերարի փառք և պատիվ վաստակելու համար։

---

1 Ս. Քոլանջյան. Պրոֆ. Հ. Ճ. Սիրունին որպես հայագիտության բազմավաստակ երախտավոր և մատենագիտություն նրա հայագիտական երկերի.—«Էջմիածին», 1971, էջ 37։

Անշուշտ, մի հայտնի չափով սահմանափակ էր ամիրաների նյութական նպաստը աղղային լուսավորությունն ու մշակույթը սատարելու ասպարեզում և դրանք անսահմանափակ՝ նրանց ինքնահեծանությունը արևմտահայ-համայնքում։ Սակայն չպետք է անտեսել, որ XVIII դարի II կեսից մինչև XIX դարի 50-ական թթ. ամիրաների նյութական ներդրումը նպաստել է աղղային հողեր արժեքները զարգացնելու ձև, ընդ որում՝ ամենաարդյունավետ ձևը, որ չի ունեցել իր այլընտրանքը արևմտահայ իրականության մեջ։ Հիրավի, Պալյանները, Տյուզյանները, Տաոյանները, Հ. Պեզճյանը, Մ. Ճեզտյերլյանը կառուցել և նորոգել են եկեղեցիներ, վարժարաններ, արհեստանոցներ, դարկ են տվել գյուղատնտեսական-կրթական ընկերությունների գործունեությանը, դրքերի և պարբերականների հրատարակությանը և այլն։ Սրանով հանդերձ, կարծում ենք, ճիշտ չէ Սիրունու աուարկությունը այն տնսակետին, ըստ որի, Կ. Պոլսի հայ բուրժուազիան պայքար էր սկսել ամիրաների դեմ՝ նրանց դիրքերը գրավելու համար։ Նա փաստարկում է այն, որ ամիրաների դեմ պայքարում էին ժողովրդական լայն խավերը՝ բոլոր ասաշավոր տարրերի հետ միասին։ Բայց այս փաստարկը ինքնին ապացուցում է, որ բուրժուազիան կարևոր դեր է ունեցել հակաամիրայական պայքարում, որպես մի ուժ, որ իր շուրջն էր համախմբել հայ հանրության ամենալայն խավերին և գլխավորում էր շարժումը։ Դժվար է համաձայնել նաև հեղինակի այն եզրակացությանը, թե «Աղղային սահմանադրությունը ինքն էր, որ դասեր պիտի ստեղծեր հետո կամ ավելի ճիշտ՝ դասերու միջև նոր պայքարներու ասպարեզ պիտի բանար» (էջ 133)։ Ընդհակառակն, հենց դասերի պայքարն էր սահմանադրությունը ստեղծողը, որը իսկապես, իր հերթին պետք է առավել տարորոշեր առկա հակասությունները կրող դասերին։

Քննարկելով լուսավորական-մշակութային կյանքի իրողությունները, Սիրունին մշտապես աչքի առջև է պահում հասարակական-քաղաքական իրականությունը։ 1850-ական թթ. Կ. Պոլսի առաջադիմականների և հետադիմականների դաղափարական հակասությունները բացահայտելուց հետո (պայքարը Ն. Զորայանի, Կ. Շահնազարյանցի և Տերոյենցի միջև, խավարամտությունն ընդդեմ Ն. Ռուսինյանի և Ա. Հայկունու) նա ըստ ամենայնի քննարկում է Կ. Պոլսի հայ գործիչների հետ Մ. Նալբանդյանի գաղափարական կապերը և այս հարցում հենվում հայ խորհրդային պատմագրության նվաճումների վրա։ Ուշագրավ են նրա բերած նոր փաստերը 1860-ականի հայ մասոնության, առհասարակ Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ մասոնների վերաբերյալ։ Իսկապես, հայ առաջավոր գործիչների համար ազատ մասոնությունը եղել է սոսկ ցուցանակ (մասոնական օթյակներին անդամակցել են նաև շափաորներ ու նույնիսկ հետադիմականներ) ուսումնասիրության ձևեր մշակելու համար։

Արևմտահայության մտավոր-դաղափարական վերելքին Հ. Սիրունին առնչում է 1862 թ. Զմյուռնի ինքնապաշտպանական կոմիտեները և աղղային ինքնորոշման տրամադրությունների տարածումը մայրաքաղաքում և դավառներում։ Նա համառոտ արժեքավորում է Հ. Սվաճյանի, Հ. Պարոնյանի, Կ. Փանոսյանի, Մ. Այվազյանի, Ա. Հայկունու և շատ ուրիշների գործունեությունը։ Ընդ որում, նա չի սահմանափակվում պատ պոլսական շրջանակներում և էական կողմերով է բնութագրում նաև Զմյուռնիայի հայ մշակութային ու հասարակական իրականությունը, բացահայտում Ստ. Ոսկանյանի, Մ. Մամուրյանի, Գր. Չիլինկիրյանի, Տնտեսյանների, Մ. Մսերյանի, Մ. Նուպարյանի և այլոց հայացքները։

Հատկապես ինքնատիպ է հեղինակը «Հայ դատը իր երկունքին մեջ» և «Հայ դատը իր խանձարուրին մեջ» բաժիններում։ Հիմնավորվում է արևմտահայերի ռուսական կողմնորոշումը և միշտ կերպով նշվում այդ կողմնորոշման սահմանները, այն, որ արևմտահայ բոլոր գործիչներն էլ Ռուսաստանի օգնությունը ակնկալում էին ոչ թե նրա կազմի մեջ մտնելու, այլ ինքնավարություն ստանալու համար։ Ն. Վարժապետյան պատրիարքի կտրուկ շրջադարձը այդ հարցում՝ իր բարեհպատակային հայտնի կոնդակից հետո, իրավացիորեն բացատրվում է այդ կողմնորոշման ազդեցությամբ։ Թուրքական քաղաքականության վայրիվերումների և միջազգային հակասական իրադրության հենքի վրա հեղինակը լուսաբանում է հայ ներկայացուցիչների հանդիպումը ռուսաց հետ Ադրիանուպոլսում, Սան-Ստեֆանոյի համապատասխան հոդվածի նախապատրաստումը, պատրիարքի և նրա համախոհների գործունեությունը, Բեռլին մեկնած հայ պատվիրակության դրամատիկ դրվիճակը և այլն։ Սիրունին այս հատվածներում ցուցադրում է հայկական հարցի նկատմամբ Թուրքիայի Բրշնամական և մեծ տերությունների շահամոլ քաղաքականությունը, սրանց ավանդականորեն ննդ և եսակենտրոն դիվանագիտությունը, ինչպես և հայ պատվիրակների և առհասարակ հայ գործիչների անփորձությունն ու թույլ տված ծայրահեղությունները։ Արժեքավոր են, մանավանդ, նրա դիտողությունները Կ. Պոլսի Ազգային ժողովի և նուպար փաշայի կազմած զուգահեռ ծրագրերի, դրանք միմյանց հակադրելու ոչ հեռատես գործելակերպի և այլնի

մաին։ Հեղինակը իրավացիորեն նկատում է, որ «Հայկական խնդիրը ևս դարձավ մեկը այն պատրվակներին, որոնք կիրառեցին Եվրոպան Գուրքիոյ հետ իր սակարկությանց ընթացքին» (էջ 673)։ Այսպիսով՝ հեղինակի բնորոշումները հայկական հարցը միջազգային իրավունքի խնդիր դարձնելու նկատմամբ։ Բայց հայկական խնդրի հարուցումը հայ գործիչների սոսկ ինքնակամ ցանկությունից կամ հնարավորը դարձնելու տենդությունից չէր կախված. ազգային ինքնագիտակցության դարթոնքը, դրա խորացումը մշակույթի և հասարակական մտքի փերածնունդի պայմաններում՝ ի վերջո և օբյեկտիվորեն հասցնելու էր ազգային ինքնորոշման դադափարին։ Այդ դադափարը օսմանյան բռնակալության դեմ մղվող պայքարում չէր կարող շրջանցվել։ Երկու ուղղությամբ՝ նախ ազգային-ազատագրական պայքարի և ապա՝ միջազգային իրավունքին ապավինելու ձևերով։ Այս իմաստով չի կարելի համաձայնել Սիրունու՝ Կ. Փանոսյանին տված բնութագրին, որով «Մանդումեի էֆքյարիս» խմբագիրը դրվատվում է հայկական հարցի միջազգայնացումը դատապարտելու և զգուշավորություն հանդես բերելու համար։ Կարծում ենք, Կ. Փանոսյանի և նրա զգուշամիտ համախոհների դիրքորոշման ամենաճիշտ գնահատականը տվել է ինքը՝ Կ. Պոլսի հայ աշխատավոր բնակչությունը, որը 1878-ից երես թեքեց «Մանդումեի էֆքյարից»։ Այդ թերթի և նրա խմբագրի երբեմնի մեծ հեղինակության անվերադարձ անկումը կապվում է հենց հայկական հարցում դրսևորած ժխտական վերաբերմունքի հետ։

Մյուս կողմից, Սիրունին ի հայտ է բերում հետադիմության լայնախոհության՝ Բեռլինի կոնգրեսի դասերի, ժողովրդի խորին հիասթափության ծալքերում նկատելով ընդդիմության ոգու արթնացումը։ 1870—1880-ականներին Զեյթունի ազատագրական բռնկումները, Վանում 1878-ին հիմնված «Սև խաչը» և Կարինի «Պաշտպան հայրենյացը» 1881—1882-ին՝ նախանշում էին Արևմտյան Հայաստանում ազատասիրական ընդվզումների նոր, աննախադեպ պոռթկումները։

Աշխատության չորրորդ հատորում հեղինակը շարունակում է նշված ժամանակաշրջանի արևմտահայ մշակութային և հասարակական կյանքի կարևոր անցքերի վերհանումն ու վերլուծությունը։ Նա սկզբունքային նշանակություն է տալիս գրական արևմտահայերենի ինքնահաստատմանը, որին նա հասավ այլ լեզուների ազդեցությունները հաղթահարելու կամ դրանց հատուկ իրողությունները ստեղծագործաբար յուրացնելու միջոցով։ Գրական լեզվի շարժումն ու զարգացումը ցուցադրվում է առհասարակ ազգային մշակույթի հոլովույթի մեջ, նրա տարբեր բնագավառների (բառարանագրություն, դպրոց, դրականություն, թատրոն, մամուլ) նպաստով, որ ամբողջական է դարձնում պրոբլեմի քննությունը։ Թերևս կարելի էր առարկել շարադրանքի թուցիկ ձևին, որը երբեմն սոսկ իրողությունների թվարկման որոշ վտանգ է ստեղծում։ Սակայն հեղինակը դրանից կարողանում է խուսափել։ Երևույթը ընդհանրության մեջ վերհանելու կարողությամբ։

Համիդյան ռեժիմի և դրան նախորդող պոլսահայ իրականությունը բնութագրվում է նաև ընկերությունների գործունեությամբ։ Ընդսմին, Սիրունին ուշադրություն է դարձնում սուլթանական լծին դիմակայելու գործում դրսևորված համազգային ջանքերին, մասնավորապես բացահայտում Բաֆֆու և Գր. Արծրունու գերը արևմտահայերի կրթական-բարեգործական ձեռնարկումների մեջ։ Նա խորամուխ է եղել ընկերությունների գործունեության մի հատկանշական կողմի մեջ՝ դրանցից շատերը արդեն թափանցել էին դավառ և ձգտում էին նպաստել նրա տնտեսական ու մտավոր դարգացմանը։ Նորովի մոտեցում պետք է համարել, ըստ իս, Սիրունու տեսակետը բողոքականների կրթական ու լուսավորական գործունեության նկատմամբ, որովհետև այդ գործունեությունը նա գնահատում է իր հակասականության մեջ։ Հիրավի, բողոքականները ծավալել էին ոչ միայն ազդապատկիչ գործողություններ, այլև սատարում էին հայերի լուսավորության գործին, նրանցից շատերը, ի դեպ, բաժանեցին հայ ժողովրդի ողբերգական ճակատագիրը։ Այս հանգամանքն է, որ գրեթե ամբողջովին անտեսվում է ժամանակակից հայ խորհրդային պատմագրության մեջ (որտեղ նկատի է տոնրվում բացառապես կրոնական անտագոնիզմը)։

Կրթական բնագավառում տեղաշարժերը հեղինակը ներկայացնում է Կ. Պոլսի հայկական դպրոցների (Նուպար-Շահնազարյան դպրոց, Կեդրոնական վարժարան և այլն) օրինակով։ Համիդյան ռեակցիայի ծավալումը ցուցադրվում է նաև մամուլի իրավական կացության բացահայտումներով։ Գրաքննության լծի ծանրացման սկիզբը նա համարում է 1885 թ., ինչպես Ա. Արփիարյանը և այս անգամ արդեն այդ հեղինակին անընդհատ վկայակոչելու համար կիսում նրա թույլ տված անճշտության «մեղքը»։ Մինչդեռ, 1880-ից բացահայտորեն դրսևորվեցին դրաքննության աննախադեպ կամայականությունները հայ մամուլի դեմ։ Նկատի ունենք մինչ այդ երբեք չպատժված «Մասիսի» եռակի խափանումները 1880—1883 թթ., «Թերեմեանը էֆքյարիս» դեմ կայացած դատը և խափանումները 1879—1880 թթ., «Մամուլ» զավեշտաթերթի ընդմիշտ խափանումը և նրա խմբագիր Գ. Այվազյանի աքսորը 1882 թ. և այլն։ Եվ

վերջապես, 1883-ին էր, որ մեկընդմիշտ արգելվեց գավառական հարստահարությունների յուսարանումը հայ մամուլի էջերում։

Աշխատության մեջ ցույց է տրվում «Արևելք» թերթի բեկումնային նշանակությունը հայ լրագրության և հրապարակախոսության պատմության մեջ, նրա շուրջ խմբված նոր սերնդի գրագետների՝ Ա. Արփիարյանի, Գր. Զոհրապի, Լ. Բաշալյանի, Տ. Կամսարականի, Մ. Կյուրճյանի (Հրանդ) և այլոց երախտիքը, որ նրանք շսայլորեն մատուցեցին գրական լեզվի, գրականության մեջ իրապաշտական ուղղության հաստատման ընդավառում։ Հայանցիկ նկարագծվում են գրական այլ դեմքեր՝ Թ. Թերզյան, Ե. Նար Պեյ, Ե. Տեմիրճիպաշյան, Ռ. Պերպերյան, որոնց վաստակի գնահատման գործում զեռևս պարտք ունի մեր գրականագիտությունը։ Հատորում լայն ընդգրկումներով վեր են հառնում պոլսահայ կյանքի այլ ասպարեզներ՝ թատրոն, երաժշտություն, փիլիսոփայական միտք և այլն՝ իրենց բազմերախտ գործիչներով ու նվիրյալներով։ Նկատելի է Սիրունու, որպես հետազոտողի յուրահատկությունը՝ հանրահայտ ճշմարտությունները նա հաճախ դիտում է բոլորովին նոր անկյան տակ։ Այս իմաստով պետք է մոտենալ հատորի «Դարձյալ մեր տուրքը թուրքին» հատվածին, որ վերաբերում է թուրքական ծառայության մեջ գտնված հայերին։ Այս թեման բազմիցս խարդախվել է թուրք պատմաբանների և պաշտոնական դաղափարախոսության բուրժուազդայնական դրյութներում։ Սիրունին ցույց է տալիս, որ ոչ թե հայերն են վայելել թուրքական «ամենահոդությունը»՝ ծառայելով նրանց պետությանը, այլ ընդհակառակն, այդ պետությունն է իր օգտին ծառայեցրել հայ տաղանդն ու ընտիր ձիրքերը։ Իրենց շնորհները թուրքերին \|ի սպաս դրած հայ գործիչները ոչ քիչ դեպքերում արժանացել են երախտամոռության, սուլթանների հեղհեղուկ և բիրտ վերաբերմունքի այն պոռթկումներին, որ սնուցվում էին արևելյան բռնակալության քմայքներից և ճակատագրական էին դառնում դժբախտ չանացողների համար։ Մշակույթի մի քանի ասպարեզներում հայերը առաջինը եղան, որոնք քաղաքակրթության շողերը տարածեցին Թուրքական իրականության մեջ, ինչպես ճարտարապետները (Պալյաններ և ուրիշներ), տպագրիչները (Արապյաններ, Հ. Մյուհենտիսյան, Ե. Գևորգյան), երգահան-երաժիշտները (Հ. Լիմոնճյան, Տ. Ջուհաճյան, Ա. Համամճյան, Լ. Խանճյան) և այլն։ Թուրքիայում հայ դերասանների գործունեության բացահայտումով հեղինակը եզրակացնում է, որ նրանք են սկզբնավորել թուրքական թատրոնը և թարգմանական թատերական գրականությունը՝ ստեղծելով խաղացանկ և բեմադրելով թատրոնում։

Վերլուծելով համիդյան մղձավանջի ժամանակ հայ ազատագրական շարժման խմորումները, Եվրոպայում սկզբնավորված հայ ազատ մամուլի բովանդակությունն ու հնչակյան կուսակցության պրոպագանդը, Սիրունին դրանք դիտում է միջազգային քաղաքականության հակոտնյա ուղղություններ մեջ։ Նա բացահայտում է այդ քաղաքականության իսկապես բացառիկ անանպաստ ուղղվածությունը հայ հեղափոխության համար։

Աշխատության վերջին («Փոթորիկեն առաջ») մասում Սիրունին անդրադառնում է մեր արդի համապատասխան գրականության մեջ քիչ ուսումնասիրված՝ Կ. Պոլսի հայության 1880-ական թթ. ազգային-հասարակական կյանքին։ Վերարտադրվում են սահմանադրական առօրյան, համրավավոր «Ղալաթիո օճախ» գործունեությունից մինչև Բեռլինի կոնգրեսի շրջանում և հետո կատարված անցքերը։ Հայ դատը կամ ազգային ինքնորոշման սկզբունքը Սիրունու համար այն փորձաքարն է, որի նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքով գնահատվում են Կ. Պոլսի սահմանադրական վարչությունները։ Այս մեկնակետից են բնութագրվում Ներսես պատրիարքը, Հ. Վեհապետյանը և Ե. Աշըգյանը, Հ. Նուրյանը, Ս. Մաքսուտը և ուրիշներ։ Ըստ էության, նույն չափանիշով են ներկայացվում Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Սերվիչենը, Տ. Յուսուֆյանը, Մ. Աղաթոնը, Մ. Աղաբեկյանը և էլի շատերը։ Մի շարք գործիչներ այս չափանիշի հետ միասին և դրան զուգահեռ ի հայտ են դալիս նաև իրենց հասարակական վարքագծի ու անհատական կյանքի, խառնվածքի ու հոդեբանության ուշագրավ համադրումների մեջ։ Թարմությամբ են շնչում այն դիմաստվերները, որ տալիս է Սիրունին էֆենդիական դասի որոշ ներկայացուցիչների և որոնց վերաբերմամբ արդի նույնիսկ բանիմաց ընթերցողն ունի տասնամյակներ ի վեր ձևավորված կաղապարներ և որոնք կասկածի ենթարկելը հեղինակի կողմից առնվազն համարձակ է։ Նախապաշարումները կասկածի ենթարկելուն։ Նկատի ունենք Տ. Յուսուֆյանի, Հ. Տատյանի և մանավանդ, նշանավոր իրավաբան և մեր օրերում մոռացված Կարապետ Շահպազի նկարագիրները, որոնք վերակենդանացնում են 1880-ական թթ. Կ. Պոլսի հայության առօրյայի հետաքրքիր հանգույցները, հանախ դրամատիկ և ողբերգական իրադարձություններով շաղախված։

Վերոհիշյալին հակառակ՝ հեղինակը սկզբունքային քննադատության է ենթարկում հետադիմական գործիչներին, որոնք հաճկատար հարմարվում էին Բ. դռան քաղաքականությանը և հակադրվում ժողովրդի ցանկություններ-

ին ու ձգտումներին։ Հանձին Սիմոն Մաքսուտի և Հ. Նուրյանի, հեղինակը ի հայտ է բերում էֆենդիական դասի հետադիմական գործիչների դիրքորոշումը և դրանից ծնվող հասարակական վարքագիծը, որ խորին արգահատանքի էր արժանացել դեմոկրատական խավերի և առաջավոր մտավորականության կողմից։ Կարծում ենք, չարաղրանքը կշահեր, եթե առավել շոշափելի գծերով ցույց արվեին Հ. Նուրյանի և նրա համախոհների որոշակի գործողությունները արևմտահայերի առանց այն էլ դրեթե լրիվ ձևական դարձած սահմանադրությունը անգործունակ դարձնելու հարցում։

Հատորի ոչ քիչ հատվածներում Սիրունի դիտանկանի կողքին հայտնվում է Սիրունի արվեստագետը. լայն իմացականության տեր այս մտավորականի համար Կ. Պոլիսը լոկ հետազոտության օբյեկտ չէ, այլ նաև ծննդավայր, մշակույթի կենտրոն, ուր գործել է ինքը և որը պարփակում է իր կյանքի լավագույն տարիների հուշերը։

Հատորի վերջին էջերում հեղինակը պոլսական իրականության խնդիրները զուգակցում է համազգային նշանակության այլ խնդիրների, ինչպես՝ Սսի կաթողիկոսության, Էջմիածնի կաթողիկոսական ընտրության, Եվրոպայում հայ հեղափոխական պրոպագանդի, վերջինի դեմ Համիդի ձեռնարկած միջոցառումների և ընդհանրապես արևմտահայության կացության հետ։ «Հայ հեղափոխությունը,— եզրակացնում է նա,—ծնավ հայ տառապանքն, ու հայ հողն էր, որ ծլան անոր առաջին սերմերը։ Հայոց աչխարհն թռած կայծերն էին, որ գացին ոգևորություն բռնկցնել հեռուն ու կերպարանք տալ հոգիները ալեկոծող հուզումներուն» (էջ 421)։

Հատորի ավարտով նախապատրաստվում է աշխատության շարունակության սկիզբը։ «Մուսա պեկ և իր դատը», «Պոլիս փոթորկի սեմին» վերնագրով համառոտ ակնարկներում ցույց է տրվում, որ թուրքական կառավարությունը 1880-ական թթ. երկրորդ կեսին արդեն ընդհուպ մոտեցել էր կոտորածների սանձազերծմանը և որ հայ ժողովուրդը դրան էր հակադրում տառապանքների փորձից ծնվող ազատագրական պայքարը։

Զույգ հատորների բազմաթեմայնությունը և արևմտահայ կյանքի ազգային ու հասարակական-քաղաքական լայն սահմանների ընդգրկումը մասամբ պատճառ են դարձել հետազոտության մեջ տարածականի գերակշռությանը՝ պրոբլեմայինի համեմատությամբ։ Դրանով են պայմանավորվել, մեր կարծիքով, որոշ վրիպումներ, անճշտություններ և չպատճառաբանված կրկնություններ։ Սակայն հատորների լուրջ արժանիքների կողքին նշվածը ունի ընդամենը հետին նշանակություն։ Հիրավի, իրենց դիտական կարևոր արժեքով գրախոսվող հատորները էականորեն լրացնում են Կ. Պոլսի հայության կյանքի՝ հեղինակի ստեղծած հանրագիտարանը։

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Գառնին IX—XIV դդ. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1988, 162 էջ։

Հայաստանի միջնադարյան հնագիտության պատմությունը հարստացավ գիտական բարձր մակարդակով գրված ևս մի հետազոտությամբ՝ «Գառնին IX—XIV դդ.» գրքով, որը Հ. Պետրոսյանի տարիների բծախնդիր ու մանրակրկիտ աշխատանքի արդյունք է։

Գառնի գյուղաքաղաքի հնագույն, անտիկ և միջնադարյան նյութական մշակույթի հարցերին նվիրված ուսումնասիրությունները[1] վաղուց ի վեր գիտական լայն շրջանառություն են վայելում։ Այս բոլորով հանդերձ, բնակավայրը, իբրև զարգացած գյուղաքաղաք, ամբողջական տեսքով ներկայացվում է առաջին անգամ։ Հնագիտական, վիմագրական, մատենագիտական գիտելիքները հնարավորություն են ընձեռել Հ. Պետրոսյանին հնավայրի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի վերելքն ու վայրէջքը ներկայացնող ծավալուն ժամանակահատվածը (IX—XI, XII—XIII, XIII—XIV դդ.) բնութա-

1 Է. Խանզադյան. Գառնիի պեղումների արդյունքները 1949—1964 թթ. Երևան, 1969։ Б. Аракелян. Гарни I. Результаты работ археологической экспедиции Института истории АН АрмССР 1949—1950 гг. Ереван, 1951; Гарни II. Результаты археологической экспедиции 1951—1955 гг. Ереван, 1957; Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան. Գառնի III, 1949—1956 թթ. պեղումների արդյունքները, միջին դարեր. Երևան, 1962։